

Դավիթ Վ. Պետրոսյան
Բանաս. գիյր. դոկտոր

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՄ

Հրանտ Մաթևոսյան և Սերգեյ Դովլաթով*

Բանալի բառեր – քաղաքակրթական միջավայր, գեղարվեստական պատում, Հ. Մաթևոսյան, Ս. Դովլաթով, ամբողջատիրություն, գրականություն, ստեղծագործական ազատություն, հեղինակ, պատմող, ասացող, Ֆ. Բրոդել, արքե-տիպ-խորհրդանիշեր:

Մուտք

Քաղաքակրթությունների պատմության փորձը հուշում է՝ ժամանակի և տարածության նոր մարտահրավերները փոխում են նախորդ քաղաքակրթության դիմագիծը, և վերջինս այլանալով շարունակում է գոյատևել նոր պայմաններում: Այսպես՝ բանական մարդը դառնում է քաղաքակրթական միջավայրերի հեղինակ և կրում է դրանք նաև իր ներսում:

Ուստի նրա մտահոգևոր աշխարհը ոչ միայն իր ժամանակի քաղաքակրթության, այլ նաև նախորդ քաղաքակրթությունների համադրական պատկերն է: Ըստ այդմ ստացվում է երկու քաղաքակրթական միջավայր. մեկը՝ անհատից **դուրս**, մյուսը՝ նրա **ներսում**: Այս միջավայրերի փոխազդեցության հիմքի վրա էլ ծնունդ է առնում լայն առումով՝ պատումը, իսկ ավելի կոնկրետ՝ գեղարվեստական պատումը:

Հոդվածի նպատակն է 20-րդ դարի երկու նշանավոր գրողների՝ Հրանտ Մաթևոսյանի և Սերգեյ Դովլաթովի ստեղծագործությունների հիմքի վրա վեր հանել քաղաքակրթական միջավայրի և գեղարվեստական պատումի փոխառնչության մի քանի առանցքային կողմեր:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 11.03.2016:

1 Տես **Шпенглер О.** Закат Европы, Ростов на Дону, 1998, **Ясперс К.** Смысл и назначение истории, М., 1991, **Тойнби А.** Цивилизация перед судом истории: Сборник, 2002, **Бродель Ф.** Грамматика цивилизаций. М., 2008, **Франк С.** Духовные основы, общества М., 1991, **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, «Ս. Խաչենց. Փրինսիպա», Եր., 2012 և այլն:

Երկու գրողներն էլ իրենց կյանքի մեծ մասը անցկացրել են քաղաքակրթական նույն միջավայրում՝ խորհրդային ամբողջատիրության օրոք²: Հ. Մաթևոսյանը իր գեղարվեստական երկերը գրել և տպագրել է այդ տարիներին. հետխորհրդային շրջանում նրա գեղարվեստական պատումը փոխվում է լռության, հանդես է գալիս հիմնականում հրապարակախոսական հոդվածներով: Սերգեյ Դովլաթովին ԽՍՀՄ-ում ուղեկցել է «հրատարակչական լռությունը»: Այնինչ տարագրության մեջ ապրած 12 տարիներին նա ռուսաց լեզվով հրատարակել է 12 գիրք: Մի քանի խոսք՝ ամբողջատիրության (տոտալիտարիզմ) և գրականություն փոխառնությունների մասին:

1. Ամբողջատիրություն և գրականություն

Իբրև քաղաքակրթական համակարգ՝ ամբողջատիրությունը լուրջ դերակատարություն է ունեցել մարդկության կյանքում հատկապես 20-րդ դարում (ԽՍՀՄ, եվրոպական, ասիական ու ամերիկյան մի շարք երկրներ): Այս համակարգը բնութագրող հիմնական հատկանիշներից առանձնացնենք մի քանիսը:

1. Ամբողջատիրական ռեժիմները ձգտում են հստակ ձևավորված գաղափարախոսությամբ իշխել հասարակության և անհատի իրավունքների վրա, ինչը գործնականում նշանակում է քաղաքականության, տնտեսության, գանգվածային լրատվամիջոցների, մշակույթի և կրթության գործունեության կենտրոնացված ղեկավարում:

2. Անհատը տարրալուծվում է կոլեկտիվի մեջ, անհատական շահերը, հետաքրքրությունները ստորադասվում են պետության շահերին:

3. Ագրեսիվ և անհանդուրժողական վերաբերմունք է դրսևորվում այլախոհական մտքերի հանդեպ, քանի որ տվյալ պետական-քաղաքական կառույցը դիտվում է միակ ձշմարիտն ու արդարացին մարդկության պատմության մեջ:

4. Ստեղծվում են նոր միջեր, որոնք ամբողջատիրական հասարակարգի կայունության, անսասանության պատրանք են ստեղծում և ձևավորում են հասարակական վարքագծի չափորոշիչներ՝ արգելելով այդ շրջանակներից դուրս որևէ շեղում³:

Ամբողջատիրության այս և մյուս հատկանիշները նկատի ուներ անգլիացի գրող Ջորջ Օրուելը, երբ 1941 թ. «Գրականություն և ամբողջատիրություն» ելույթում նշում էր. «Խնդիրը, որ մեզ համար կարևորություն

2 Հ. Մաթևոսյանն ու Ս. Դովլաթովը հանդիպել են ընդամենը մեկ անգամ՝ գրական կոնֆերանսներից մեկի ժամանակ. «Նա ինձ բոլորովին նման չէ, նա իսկական հայ է, - Մաթևոսյանի մասին գրել է Դովլաթովը, - խելագարվում է այն ամենից, ինչ կատարվում է հայրենիքում: Նա այնքան ամաչկոտ, անկեղծ, բարի, բացարձակապես հրեշտականմարդ է, որ նրա հետ ընկերանալով՝ սկսեցի նայել ասես նրա աչքերով: Երբ կարդում եմ հայաստանյան իրադարձությունների մասին, պատկերացնում եմ, թե ինչ է հիմա զգում Մաթևոսյանը: Ահա այսպես, նրա հանդեպ սիրո միջոցով իմ մեջ ինչ-որ հայկական զգացմունքներ առաջացան...» (ընդգծումը մերն է Գ.Պ.) («Дар органического беззлобия, Интервью Виктору Ерофееву», www.sergeidovlatov.com/books) ero-feev.html:

3 Տե՛ս Тоталитаризм, <http://www.bibliotekar.ru/konstitucionnoe-pravo-1/120.htm> «Тоталитарная цивилизация» <http://rogd.bluel.net/051> с/, «Тоталитарный режим» <http://kulturoznanie.ru/politology/totalitarnyj-rezhim/> Гаджиев К. Тоталитаризм как феномен XX века // Вопросы философии. 1992. N 2 I и др.

է ձեռք բերում, հետևյալն է. կարող է արդյոք գրականությունը վերապրել նման մթնոլորտում: Կարծում եմ՝ պատասխանը պիտի լինի կարճ և հստակ՝ ոչ: Եթե ամբողջատիրությունը դառնա համաշխարհային և շարունակական (պերմանենտ) երևույթ, ապա գրականությունը, ինչպիսին մենք այն գիտենք, կդադարի գոյություն ունենալ»⁴:

Խորհրդային ամբողջատիրական համակարգը Ստալինի անձի պատանուներից հետո, հատկապես 1960-ական թթ. ձեռք էր բերել «ավելի փափուկ ձևեր», ինչը բնութագրվում է որպես «ձնհալի շրջան»: Հենց այս տարիներին են իրենց գրական ակտիվ գործունեությունը ծավալել Հ. Մաթևոսյանը և Ս. Դովլաթովը: Ուշագրավ են ամբողջատիրական քաղաքակրթական միջավայրին նրանց տված գնահատականները:

Հարցազրույցներից մեկում իրեն ուղղված հարցին («Իմաստ ունե՞ր գրողի արտագաղթը») Դովլաթովն այսպես է պատասխանում. «Ուներ, թեկուզ և այն պատճառով, որ իմ և շատ ուրիշների համար Խորհրդային Միության մեջ մնալը անվտանգ չէր: Բացի այդ՝ ինձ և իմ բարեկամներին չէին տպագրում, համենայն դեպս չէին տպագրում այն, ինչ գրված էր անկեղծորեն և լրջորեն: Ես մեկնեցի, որպեսզի գրող դառնամ և դարձա՝ իրականացնելով բանտի և Նյու Յորքի միջև ոչ բարդ ընտրությունը: Իմ արտագաղթի միակ նպատակը **ստեղծագործական ազատությունն էր**»⁵ (ընդգծ. մերն է - Դ. Պ.):

Մաթևոսյանը խնդրին մոտենում է այլ դիտանկյունից: Իր հողվածներից մեկում նա գրում է. «Ամբողջատիրությանն ու դիկտատին ընդդիմադիր գրականություն, մեզանում, ինչ էլ լինի, կար, որ սովետական իրականության մեջ կարողացավ գյուլագործոցներ տալ: [...]Տոտալիտարիզմը բոլոր երկրների ու ժամանակների ցավն է, ուրեմն և՛ գրականության հավերժական նյութը: [...] **Գրականությունն ազատությունն է**. կիսագատ չեն լինում՝ ազատ են լինում կամ ստրուկ»: Ապա խոսելով «ձնհալի» տարիների մասին՝ նշում է. «Եթե այսօր մեզանում արժեքավոր որևէ բան կա՝ առաջացել ու գորացել է այն օրերի թարմ շնչից»⁶ (ընդգծ. մերն է - Դ. Պ.):

Միտեցումների տարբերությամբ հանդերձ՝ երկու հեղինակներն էլ ընդգծում են **ստեղծագործական ազատության փաստը**, որպես քաղաքակրթական միջավայրում գեղարվեստական պատումի կայացման հիմնական պայման: Այդ ազատությունից էլ բխում են նրանց պատումների ինքնատիպությունն ու խորքային ենթատեքստերը: Մենք կներկայացնենք ընդամենը մի քանի առանցքային կողմեր:

2. Հեղինակը, պատմողը (նարրատոր) և քաղաքակրթական միջավայրը

Գեղարվեստական պատումի մասին տեսական ուսումնասիրությունները մեր օրերում ի հայտ են բերել կառուցվածքային հետաքրքիր շերտեր,

4 **Джордж Оруэлл**, Литература и тоталитаризм, http://orwell.ru/library/articles/totalitarianism/russian/r_lat

5 **Сергей Довлатов**, Писатель в эмиграции, Интервью, данное журналу «Слово», <http://www.sergei-dovlatov.com/books/slovo.html>

6 **Հրանտ Մաթևոսյան**, ես ես եմ, <http://hrantmatevossian.org/hy/works/id/es-es-em#tabcontent>

որոնք նորովի են բնութագրում հեղինակի, պատմողի, հերոսների և պատումին բնորոշ մյուս տարրերի (գործողություններ, իրադարձություններ, իրավիճակներ) ներտեքստային հարաբերությունները: Սրանք ամբողջության մեջ դիտարկվում են իբրև հորինվածք, մտացածին հյուսվածք, որոնք «գոյություն չունեն կամ գոյություն չեն ունեցել իրականության մեջ»⁷: Այս համատեքստում ուշագրավ են հատկապես հեղինակ-պատմող հասկացությունների մեկնաբանությունները:

Հեղինակը՝ իբրև ստեղծագործող անհատ, գրելու ընթացքում աստիճանաբար տարրալուծվում է գեղարվեստական պատումի մեջ և տեքստն ավարտին հասցնելով՝ «կտրում է պորտալարը» նրանից: Նա՝ իբրև կոնկրետ պատմական անձ, այլևս «չի պատկանում» տվյալ ստեղծագործությանը, փոխարենը ստեղծում և տեքստի մեջ կայացնում է **պատմողին (նարրատորին) և հերոսներին**, որոնք այնուհետև շարունակում են ապրել նրանից անկախ:

Իր հրապարակախոսական հողվածներում Մաթևոսյանը ուշագրավ մտքեր ունի հեղինակի՝ որպես արարչի, գործունեության և առաքելության մասին. «Առասպելի ջրհեղեղը եթե կրկնվեր, գրում է նա, Նոյան պես կարող էի վերստեղծել հողագործության ու անասնապահության մեծ մշակույթները, և մարդկանց հիշողությունը եթե հանկարծ խաթարվեր, ազգականներին ու երկրացիներին այն օրերի վարքից կարող էի նորից ժողովել մարդկային բարոյականության օրենսգիրքը»⁸:

Հեղինակի մասին հետաքրքիր դիտարկումներ ունի նաև Ս. Դովլաթովը: Մասնավորապես նա իրեն անվանում է ոչ թե գրող, այլ ասացող (рассказчик)՝ պատճառաբանելով. «Դա նույն բանը չէ: Գրողը զբաղված է լուրջ հիմնախնդիրներով. նա գրում է այն մասին՝ հանուն որի ապրում են մարդիկ, ինչպես պիտի ապրեն մարդիկ: Իսկ ասացողը գրում է, թե ԻՆՉՊԵՍ են ապրում մարդիկ...»⁹: Դովլաթովը զգալիորեն մոտեցնում է հեղինակի և պատմողի սահմանները, սակայն նրանց նույնականության մասին խոսք լինել չի կարող, քանի որ «պատումային ստեղծագործության հիմնական հատկանիշը նման միջնորդի (նարրատորի – Դ. Պ.) ներկայությունն է հեղինակի և պատմվող աշխարհի միջև»¹⁰: Ավելին, տեսաբանները նարրատոլոգիայի մեջ ընդունում են պատմողի երկու տեսակ՝ **պատմող (повествователь) և ասացող (рассказчик)**: «Պատմողը խոսքի կրողն է, չբացահայտված, չանվանված և տարրալուծված տեքստի մեջ, ասացողը խոսքի կրողն է, որ իր անձով անթաքույց կազմակերպում է ամբողջ տեքստը»¹¹:

Գեղարվեստական պատումի մեջ պատմողի և քաղաքակրթական միջավայրի հետաքրքիր դրսևորումներ կան մասնավորապես **Հ. Մաթևոսյանի «Խումհար»** և **Ս. Դովլաթովի «Արգելոց»** վիպակներում: Մի քանի խոսք սրանց ընդհանուր կողմերի մասին.

1. Երկու գործերում էլ գլխավոր հերոսը **ասացողն է**, որի անմիջական

7 **В. Шмид**, Нарратология, <http://yanko.lib.ru/books/cultur/shmid-narratology.pdf>

8 **Հրանտ Մաթևոսյան**, Երկու խոսք ընթերցողիս hrantmatevossian.org/m/up/erku_xosq_yntercosis.pdf

9 Дар органического беззлобия, Интервью Виктору Ерофееву, <http://www.sergeidovlatov.com/books/erofeev.html>

10 **В. Шмид**, Нарратология, <http://yanko.lib.ru/books/cultur/shmid-narratology.pdf>

11 **Корман Б. О.** Изучение текста художественного произведения. М., 1972, с. 33–34.

ներկայությամբ հյուսվում են գործողությունները: Հերոսը խոսում է առաջին դեմքով, ընդ որում շատ տեղեկություններ համընկնում են հեղինակների ինքնակենսագրական դրվագներին. «Խումհարում» Արմեն Մնացականյանը Մոսկվայի կինոսցենարական դասընթացների ունկնդիր է. ժամանակին այնտեղ սովորել է Մաթևոսյանը: «Արգելոց» հերոսը՝ Բորիս Ալիխանովը, Դովլաթովի նախատիպն է. գրողն աշխատել է Ա. Ս. Պուշկինի թանգարանում 1976–1977 թվականներին: Իր մի շարք այլ գործերում Դովլաթովը ասացողին վերագրում է նույնիսկ սեփական ազգանունը: Սակայն սրանք մնում են իբրև պայմանական հնարանքներ, քանի որ պատմողը գործում է **Ֆիկցիոնալ իրականության** մեջ, որտեղ հորինված (ֆիկտիվ) են «պատկերվող աշխարհն ամբողջությամբ և նրա բոլոր բաղադրամասերը՝ իրադրություններ, անձեր, գործողություններ»¹²:

2. Պատմողը և հերոսները գործում են **որոշակի քաղաքակրթական միջավայրում**՝ Մոսկվայի Կինոյի ինստիտուտ և Պուշկինի անվան թանգարան: Երկուսում էլ առկա են խորհրդային ամբողջատիրական համակարգին բնորոշ բաղադրիչները. Մաթևոսյանի մոտ՝ սցենարիստի նկատմամբ ուղղակի և անուղղակի պարտադրանք, սցենարի գրաքննություն, ֆիլմերի միջոցով խորհրդային կեղծ միֆերի ստեղծում և այլն: Դովլաթովի մոտ՝ էքսկուրսավար հերոսին ստանդարտ տեքստերով ելույթ ունենալու թելադրանք, թանգարանային կեղծ ցուցանմուշների առատություն, աշխատակիցների հանդեպ ներքին գործերի մարմինների հատուկ ուշադրություն և այլն:

3. Երկու գլխավոր հերոսներն էլ **մտավորականներ են**, որոնց հարաբերությունները միջավայրի հետ ի հայտ են բերում նրանց ներքին քաղաքակրթական շերտերի հետաքրքիր բացահայտումներ: Մենք արդեն ասացինք, որ բանական մարդու մտահոգևոր աշխարհը ոչ միայն իր ժամանակի, այլև նախորդ քաղաքակրթությունների համադրական պատկերն է: Այս դիտանկյունով էլ կցանկանայինք անդրադառնալ Մաթևոսյանի և Դովլաթովի հիշյալ ստեղծագործություններին՝ քննելով դրանք ընդամենը մեկ՝ քաղաքակրթական ժամանակ և միջավայր փոխառնչությունների համատեքստում:

3. Քաղաքակրթական ժամանակը և միջավայրը «Խումհար» և «Արգելոց» վիպակներում

Քաղաքակրթական ժամանակի կառույցի մասին տեսաբանների շրջանում լայն ճանաչում ունի Աննալների դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ, ֆրանսիացի պատմաբան Ֆերնան Բրոդելի առաջադրած հղացքը: Նա պատմական գործընթացը դիտարկում է ժամանակային երեք չափումների համատեքստում՝ կարճ տևողություն, որին առավել բնորոշ է իրադարձային պատմությունը, միջին տևողություն (բնութագրվում է տնտեսական տեղաշարժերով), և երկար տևողություն, որտեղ ժամանակի ընթացքը շատ դանդաղ է: Եթե այս չափումներից առաջինը տասնամյակի տևողություն ունի, երկրորդը՝ հիսնամյակի կամ հարյուրամյակի, ապա երրորդի դեպքում

12 В. Шмид, Нарратология, <http://yanko.lib.ru/books/cultur/shmid-narratology.pdf>

պատմությունը «կայանում է շարժունության և անփոփոխության սահմանագծին», և չափվում է հինգհարյուրամյակով կամ հազարամյակով¹³:

Քաղաքակրթական ժամանակի հետաքրքիր դրսևորումներով աչքի են ընկնում հատկապես այն ստեղծագործությունները, որոնց մեջ պատումը ոչ թե միագիծ է, այլ **հատվածային** (Ֆրագմենտար), երբ հեղինակը պատմողի և հերոսների միջոցով ազատորեն խախտում է ժամանակի և տարածության ընդունված սահմանները, իսկ ընթերցողը գեղարվեստական խորքին հասնում լինելու համար պետք է ապավինի իր ներսում բացված հակառակ հեռանկարի զգացողությանը:

Եվ Մաթևոսյանի, և Դովլաթովի հիշյալ վիպակները գրված են հատվածային պատումին բնորոշ չափումներով, ուստի սրանց մեջ կարելի է գտնել Ֆ. Բրոդելի նշած հատկապես կարճ և երկար տևողությունների տարբեր դրսևորումներ: «Խումհար» վիպակում **կարճ տևողությամբ** հատվածներ են Մ. Անտոնիոնիի ֆիլմի սցենարի, գյուղական կյանքի և պատմողի հիշողությամբ վերականգնվող մի շարք այլ երևույթների քրոնոտոպները, որոնց կենտրոնում Մոսկվայի կինոսցենարական դասընթացներն են՝ կարճ ժամանակին բնորոշ իրադարձային պատմություններով: Դովլաթովի վիպակում թեև ավելի քիչ են հատվածային անցումները, բայց դրանք կան (լենինգրադյան օրեր, կնոջ հետ կապված հուշեր և այլն) և իրենց ներկայությամբ ավելի են խտացնում Միխայլովսկոյե արգելոցում գլխավոր հերոսի ապրած կարճ ժամանակի դրամատիկ անցումները:

Կարճ տևողության մեջ՝

ա) Մաթևոսյանի և Դովլաթովի պատմողները **ընդդիմադիր կեցվածք** ունեն ամբողջատիրական համակարգով ապրող միջավայրի հանդեպ,

բ) այն փոխելու **անգործությունը** ստիպում է հերոսներին տրվել հարբեցողության (Դովլաթով) կամ էլ ակնատես լինել հարբեցողների կոիվներին (Մաթևոսյան),

գ) մարդկային հարաբերություններում վերանում են **բարոյականի և անբարոյականի սահմանները** (Դովլաթով), կամ էլ վերջինիս կուլ չգնալու համար հերոսն իր ներսում արթնացնում է ծննդավայրի մաքրության, ընտանեկան անաղարտ միջավայրի հիշատակները (Մաթևոսյան),

դ) ծանր իրավիճակներից դուրս գալու ելքը **փակուղային է**: Այնուհանդերձ, երկու հեղինակներն էլ, թեև տարբեր մոտեցումներով, իրենց վիպակներն ավարտում են **ներքին հայեցումով**: Այդ հայեցումը նրանց տանում է քաղաքակրթական ժամանակի **երկար տևողության հետ հաղորդակցման**, ինչն էլ դառնում է խնդրի հանգուցալուծում:

Երկար տևողությունը և քաղաքակրթական միջավայրը արվեստագետի հոգում բյուրեղանում են նրա մեջ առանձնակի ուժով ներդրված **արքեստիպային կողերի** միջոցով: Ասվածը բնութագրական է նաև Մաթևոսյանի ու Դովլաթովի պարագային:

«Խումհար» վիպակն ավարտվում է հետևյալ տողերով. «Երեսն ինչպես

13 Տե՛ս Ալբերտ Ստեփանյան, Երվանդ Մարգարյան, Ժամանակի կառույցը Ֆ. Բրոդելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կրթություն», Եր., 2005, N 1-2, էջ 33-42, Յ. Ա. Чеканцева, Время историка, «Образы времени и исторические представления. Россия-Восток-Запад», изд. «Круг», М., 2010, с. 66-78, И. Л. Тучкова, Специфика категории «историческая время» в трудах Ф. Броделя, www. Nbu.gov.ua

պատին էր արել՝ այդպես անշարժ այդ կինը կար, բայց հագիվ թե քնած լիներ: Ծածկոցի տակ նա հավանորեն լսում էր մեր շշուկները և, ինչպես որ թնդանոթի փողի միջով հեռավոր հովտում աղվեսն է երևում կամ ծառը կամ գլխին թաշկինակ կապած մշակը, մեր շշուկներով նրա համար բացվում էր **փոքրիկ, տաք, լուսավոր մի այգի**» (ընդգծ. մերն է – Դ. Պ.)¹⁴: Հատվածում առկա երեք արքետիպերից՝ **ծառ, հովիտ, այգի**, կանգ առնենք վերջինի վրա:

«**Այգու**» միֆական, արքետիպային իմաստը բազմիցս ուսումնասիրվել է հայ և ռուս մշակութաբանների կողմից¹⁵: «Այգին» (ածու)՝ իբրև մշակված հասարակական տարածք, հայ իրականության մեջ հիշատակվում է դեռևս V դարում, պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ¹⁶:

Մաթևոսյանի ենթագիտակցական աղերսները իր նախնիների հետ ակնհայտ են: Ժամանակի կարճ տևողությամբ ապրող մեղավոր հերոսուհուն չպետք է գրկել «տաք, լուսավոր այգում» **ինքնամաքվելու հնարավորությունից**: Սա հայ գրողի հավատամքն է, որը կապում է նրան քաղաքակրթական երկար տևողության հեռանկարին:

«Արգելոց» վիպակն ավարտվում է հերոսի և նրա կնոջ խորհրդանշական երկխոսությամբ: Դովլաթովը պատմողի շուրթերով ներմուծում է **դրախտ, սեր, ճակատագիր** արքետիպ-սիմվոլները: Արգելոցի և հարակից գյուղերի մարդկանց՝ մեղքերով լի կյանքում այս սիմվոլները ոչ մի արժեք չունեն, դրանք արժեգրկված են նաև Պուշկինի թանգարանի կեղծ ցուցանմուշների և էքսկուրսավարների տգիտության ֆոնին: Սակայն կնոջ մի նախադասությունը՝ հղված այլ քաղաքակրթական միջավայրից, հերոսի՝ որպես գրողի գնահատման ու արժևորման մասին («Բոլորն այստեղ քեզ խոնարհվում են»), նրան կարճ տևողությունից տեղափոխում է **երկար տևողության տարածք** և ստիպում ապրել քաղաքակրթական ներքին հավասարակշռությունը (հոմեոստասիսը) վերականգնելու լավատեսությամբ: «Հանկարծ ես տեսա աշխարհը՝ իբրև մի միասնական ամբողջություն: Ամեն ինչ տեղի էր ունենում միաժամանակ: Ամեն ինչ կատարվում էր իմ աչքերի առջև [...] Սա արդեն **սեր չէր, այլ ճակատագիր...**»¹⁷(ընդգծ. մերն է – Դ. Պ.): Տարագրության տարիներին անգամ Դովլաթովի գեղարվեստական պատումի մեջ **ռուսականը** շարունակում էր մնալ որպես կենդանի գեղագիտական ձև և ճակատագիր:

Եզրակացություններ

Հ. Մաթևոսյանը և Ս. Դովլաթովը իրենց ստեղծագործական կյանքի մեծ մասը անցկացրել են խորհրդային ամբողջատիրական միջավայրում,

14 **Հրանտ Մաթևոսյան**, Երկեր, երկու հատորով, հատ. 2, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1985, էջ 240: 15 Տե՛ս **Лихачев Д. С.** Поэзия садов, СПб, 1991, Мифы народов мира: энциклопедия в 2 т.(под ред. С. А. Токарева), М., 2003, **Зубкова Н. Н.** Архетип сада в русской литературе XIX-начала XX вв. как символическое воплощение исторических судьб России, <http://rae.ru/forum2012/18/2961> , **Համլետ Պետրոսյան**, Հայաստան-դրախտ կորուսյալ (Հայ ինքնության մի հարացույցի ձևավորման ակունքները), «Ինքնության հարցեր, Տարեգիրք», Եր., 2002 և այլն:

16 Տե՛ս **Ա. Ստեփանյան**, Պատմության կերպարները Մեծ Հայքում, գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, Ե., «Սարգիս Խաչենց. Փրինսիփո», 2012, էջ 62-63:

17 <http://www.lib.ru/DOWLATOW/zapovednik.txtu>

սակայն, հավատարիմ ստեղծագործական ազատության սկզբունքին, գեղարվեստական պատումը կառուցել են տարբեր քաղաքակրթական միջավայրերի ներքին համադրության չափումներով:

Այս համատեքստում առանձնակի ուշադրության են արժանի հեղինակ-պատմող-քաղաքակրթական միջավայր փոխառնչությունները: Պատմողի կերպարը կենսագրական ինչ-ինչ տեղեկություններով հիշեցնում է հեղինակին, սակայն հեղինակ-պատմող (ասացող) համեմատական զուգահեռը վերջին հաշվով ի հայտ է բերում «հեղինակի մահը» (Ռոլան Բարտ) և առանցքային դարձնում ասացողի դերը գեղարվեստական պատումի մեջ:

Դա նկատելի է Հ. Մաթևոսյանի «Խումհար» և Ս. Դովլատովի «Արգելոց» վիպակներում, երբ, ի մասնավորի, դրանք դիտարկում ենք քաղաքակրթական ժամանակի և միջավայրի փոխհարաբերությունների համատեքստում: Հատվածայնության սկզբունքով կառուցված երկու պատումներն էլ հագեցած են իրադարձային պատմություններով (ժամանակի կարճ տևողություն) և ընթացքում հանգում են փակուղային իրավիճակների: Սակայն երկու գրողներն էլ ելքը գտնում են մետաֆիզիկական ինքնահայեցողությամբ, որը արքեստիպ-սիմվոլները մղում է դեպի քաղաքակրթական երկար տևողության տարածք:

Քաղաքակրթական միջավայրի և գեղարվեստական պատումի փոխառնչության թեման Հ. Մաթևոսյանի և Ս. Դովլատովի ստեղծագործություններում հիպերտեքստային վերլուծության բազում հնարավորությունների է հանգեցնում, որոնք յուրաքանչյուր դեպքում նոր բացահայտումների առիթներ կարող են տալ հետազոտողին:

Դավիթ Վ. Պետրոսյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 20-րդ դարասկզբի հայ գրականության և մամուլի պատմության հիմնախնդիրները («Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում», Եր., 2007), հեղինակել է գրականության և ժուռնալիստիկայի զարգացման արդի միտումներին նվիրված ուսումնասիրություններ ու հոդվածներ:

Summary

CIVILIZATIONAL ENVIRONMENT AND NARRATIVE ART

Hrant Matevosyan and Sergei Dovlatov

David V. Petrosyan

Key words – civilization environment, bells lettres, H. Matevosyan, S. Dovlatov, totalitarianism, literature, freedom to create, author, narrator, F. Braudel, archetypal symbol.

Based on the novels “Hangover” by H. Matevosyan and “Reserve” by S. Dovlatov, the article discusses the relations of political environment and narra-

tive art, which develop in a very interesting way in parallel to the creation of the text. The comparative study was conducted in the context of civilizational time. Both stories are built around the principle of fragmentation, full of events (in a short period of time) that lead the story to the impasse. H. Matevosyan and S. Dovlatov overcome this problem by means of metaphysical self-contemplation: the narrative ends with the help of the archetypal symbols in the territory of a long civilizational duration.

The subject of the relation of civilizational environment and narrative art, represented by H. Matevosyan and S. Dovlatov, also has the possibility of other hypertext analysis that can lead the researcher towards new discoveries.

Резюме

ЦИВИЛИЗАЦИОННАЯ СРЕДА И ХУДОЖЕСТВЕННОЕ ПОВЕСТВОВАНИЕ

Грант Матевосян и Сергей Довлатов

Давид В. Петросян

Ключевые слова – цивилизационная среда, художественное повествование, Г. Матевосян, С. Довлатов, тоталитаризм, литература, свобода творчества, автор, рассказчик, Ф. Бродель, архетипический символ.

В статье на основе романов Г. Матевосяна “Похмелье” и С. Довлатова “Заповедник” рассматриваются соотношения политической среды и художественного повествования, которые развиваются очень интересным образом параллельно созданию текста. Их сравнительное исследование было проведено в контексте цивилизационного времени. Обе истории построены вокруг принципа фрагментации, насыщены событиями (в коротком промежутке времени), которые приводят повествование к тупиковой ситуации. Г. Матевосян и С. Довлатов преодолевают эту проблему посредством метафизического само-созерцания: повествования заканчиваются с помощью архетипических символов на плоскости длительной цивилизационной продолжительности.

Тема соотношения цивилизационной среды и художественного повествования, в лице Г. Матевосяна и С. Довлатова, также имеет возможности других гипертекстовых анализов, которые могут подсказать исследователю пути к новым открытиям.